ԴՐՎԱԳՆԵՐ ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

***

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր 23 անդամներից 8-ը՝ Հովսեփ Օրբելի, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Ավետիք Իսահակյան, Գրիգոր Ղափանցյան, Ստեփան Մալխասյանց, Հակոբ Մանանդյան, Արսեն Տերտերյան, ընդգրկված էին հասարակական գիտությունների բաժանմունքում: Բաժանմունքը միավորել է նաև 3 կազմակերպություն՝ Պատմության ինստիտուտը, Գրականության ինստիտուտը, Լեզվի ինստիտուտը: 1955 թ. բաժանմունքի կազմում ընդգրկվել է նորաստեղծ Տնտեսագիտության ինստիտուտը, 1958 թ.՝ Արվեստի ինստիտուտը, 1959 թ.՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, 1969 թ.՝ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, 1971 թ.՝ Արևելագիտության ինստիտուտը:

***

1994 թ. պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքների միավորմամբ ստեղծվել է հումանիտար գիտությունների (հետագայում՝ հայագիտության և հասարակական գիտությունների) բաժանմունքը՝ ընդգրկելով Պատմության, Հնագիտության և ազգագրության, Արևելագիտության, Տնտեսագիտության (հետագայում՝ Մ. Քոթանյանի անվ.), Փիլիսոփայության և իրավունքի (հետագայում՝ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի), Հ. Աճառյանի անվ. լեզվի, Մ. Աբեղյանի անվ. գրականության, Արվեստի ինստիտուտները, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (1995 թ.-ից), Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը (1997 թ.-ից), «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը (2012 թ.-ից): Տարբեր տարիների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարներ են եղել ակադեմիկոսներ Գ. Բրուտյանը (1994-1995 թթ., 1998-2002 թթ.), Գ. Սարգսյանը (1995-1998 թթ.), Հ. Ավետիսյանը (2002-2004 թթ.), Վ. Բարխուդարյանը (2005-2011 թթ.), Յու.Սուվարյանը (2011 թ.-ից առ այսօր):

Ներկայումս բաժանմունքի կազմում ընդգրկված են 8 ակադեմիկոս, 19 թղթակից և 26 արտասահմանյան անդամներ, 31 պատվավոր դոկտոր:

***

1943 թ. նոյեմբերին ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիման վրա ստեղծված Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում **Պատմության ինստիտուտի** *հիմնադրումը նոր թափ է հաղորդել հայրենի պատմագիտությանը: Ինստիտուտի գործունեության առաջին տարիներն անքակտելիորեն կապված են ՀԳԱ առաջին նախագահ Հ. Օրբելու անվան հետ: Ինստիտուտը շուտով իր շուրջն է համախմբել հայ պատմագիտության նշանավոր շատ երախտավորների:*

Պատմության ինստիտուտը դարձել է հանրապետության պատմական մտքի հիմնական և առաջատար օջախը: Փաստորեն, սկսվել է հայ ժողովրդի պատմության համակարգված հետազոտումը՝ հնագույնից մինչև նորագույն ժամանակաշրջանը, ինստիտուտը մասնագիտացել է հայոց ամբողջական պատմության ուսումնասիրության բնագավառում:

***

Պատմության ինստիտուտն ունեցել է հին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն պատմության, հնագիտության, փիլիսոփայության բաժիններ, որոնց հիման վրա հետագայում ակադեմիայի համակարգում ստեղծվում են գիտական ինքնուրույն հիմնարկներ:

***

1950-ական թթ. կեսից ուժեղացել է հետաքրքրությունը հայկական գաղթավայրերի պատմության նկատմամբ: Հրատարակվել են աշխատություններ՝ նվիրված Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Եվրոպայի երկրների, Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի հայկական գաղթավայրերի, հայերին հյուրընկալած երկրների տնտեսական ու հասարակական կյանքին նրանց մասնակցության, հայ ազգային մշակույթի զարգացման, հայրենիքի հետ հայկական գաղթավայրերի կապերի, հայկական սփյուռքի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի, սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների, սփյուռքահայության հայրենադարձության կազմակերպման ու իրագործման պատմությանը:

***

Լույս են տեսել տարբեր ժամանակաշրջանների հիմնահարցերին վերաբերող փաստաթղթերի և նյութերի բազմաթիվ ժողովածուներ: Հատկապես մեծ արժեք են ներկայացնում XVII-XVIII դդ. հայ-ռուսական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի և նյութերի բազմահատորյակը, «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (2 հատորով), «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Հայրենական մեծ պատերազմին հայերի մասնակցության և այլ թեմաներով ժողովածուները: Հրատարակված հոդվածների և նյութերի ժողովածուներից պետք է առանձնացնել հայ-ուկրաինական, հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությանը նվիրված ստվարածավալ ժողովածուները:

Հայ պատմաբանների ձեռքբերումները խորհրդային ժամանակաշրջանում ընդհանրացվել են Պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակում (1967-1984 թթ.), որն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Բազմահատորյակն իրավացիորեն դիտվել է որպես հայ պատմագիտական մտքի նվաճում, հայ պատմագիտության մեջ աննախադեպ երևույթ:

***

Պատմագիտությունը որոշակի ազատություն է ստացել վերակառուցման տարիներին: Արցախյան շարժման առաջին օրերից Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում ստեղծվել է «Լեռնային Ղարաբաղ»

տեղեկատուն (1988 թ.), որը թարգմանվել է մի քանի լեզուներով և տարածվել արտասահմանում: Պատմական տեղեկանքը կարևոր նշանակություն է ունեցել Արցախի ճշմարիտ պատմությունը ներկայացնելու համար, նպաստել Արցախի պատմության թուրք-ադրբեջանական խեղաթյուրումների և բացահայտ կեղծիքների մերկացմանը:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, հիմնվելով նախկինից եկող պատմագիտական ավանդույթների վրա, արդեն զերծ գաղափարաքաղաքական կաշկանդիչ պարտադրանքներից, հայ պատմագիտությունը զգալի հաջողություններ է արձանագրել: Այդ աշխատանքներում իրենց ներդրումն են ունեցել ինչպես Պատմության ինստիտուտի ավագ սերնդի պատմաբանները, այնպես էլ անկախ պետականության օրոք գիտական ասպարեզ մտած երիտասարդ ուսումնասիրողները:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո նոր հիմքերի վրա է դրվել Հայոց հին և միջին դարերի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Ուսումնասիրություններ են հրատարակվել հնագույն հայկական պետական կազմավորումների, Ուրարտուի (Վանի թագավորության), Երվանդունիների, Արտաշեսյան դարաշրջանի Հայաստանի վերաբերյալ:

***

Ուսումնասիրություններ են կատարվել միջնադարում Հայոց եկեղեցու դերի, Արծրունի և Պահլավունի իշխանական տոհմերի պատմության, Անի մայրաքաղաքի եկեղեցիներին արված նվիրատվությունների վերաբերյալ: Լուսաբանվել են միջնադարյան Հայաստանի պատմության առանձին խնդիրներ:

Նոր աշխատություններ են հրատարակվել Կիլիկիայի հայկական թագավորության պատմության վերաբերյալ:

***

Հայաստանի անկախացումից հետո հայ պատմաբանները հնարավորություն են ստացել ազատորեն ուսումնասիրելու խորհրդային տարիներին կողմնակալորեն լուսաբանվող կամ «փակ» համարվող բազում հիմնահարցեր: Նորովի են մեկնաբանվել XVII-XVIII դդ. հայ ազատագրական և XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևմտահայ ազատագրական շարժումները, հայ ավանդական կուսակցությունների պատմությունը:

***

Ուսումնասիրություններ են կատարվել նաև Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Հրատարակվել են աբդուլհամիդյան, Կիլիկիայի հայության կոտորածների, 1915 թ. հայության ինքնապաշտպանական կռիվների, Հայոց ցեղասպանությանն առնչվող տեսական հարցերի, ցեղասպանության իրականացման թուրքական քաղաքականության շարունակականության, միջազգային արձագանքների, ասորիների ցեղասպանության վերաբերյալ աշխատություններ: Հրատարակվել են նաև Հայոց ցեղասպանությունը փաստող գերմանական, ռուսական փաստաթղթերը:

***

ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը *հիմնադրման օրվանից հետևողականորեն զբաղվել է հավաքչական աշխատանքով, ինչի շնորհիվ թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերն ու գրադարանն անընդհատ ընդլայնվում են: Հավաքչական աշխատանքները հատկապես մեծ ծավալ են ստացել վերջին տարիներին, երբ թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում և գրադարանում պահվող միավորների թիվը հասել է շուրջ 71000-ի: Ստեղծվել է մշտական թանգարանային ցուցադրություն՝ «Հայոց ցեղասպանության» թեմայով, որը պարբերաբար համալրվում է նորահայտ նյութերով: Բացի այդ, կազմվել և ներկայացվել են հինգ ժամանակավոր ցուցադրություններ, որոնցից երկուսը, որպես շարժական ցուցադրություններ, ներկայացվել են տարբեր երկրներում:*

***

Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցի կապակցությամբ նախատեսվում է ընդարձակել թանգարան-ինստիտուտի ցուցադրական մակերեսը, ստեղծել հայեցակարգային նոր հենքի վրա մշակված և ժամանակակից թանգարանային ձևավորմամբ ու տեխնիկական հնարավորություններով հագեցած ցուցադրություն և գիտահետազոտական մաս, ինչի շնորհիվ թանգարան-ինստիտուտը կդառնա միջազգային նշանակության գիտահետազոտական կենտրոն ու թանգարան:

***

Հայաստանի անկախացումից հետո հայ պատմագիտության ձեռքբերումներն արտացոլվելու են Պատմության ինստիտուտի կողմից պատրաստվող «Հայոց պատմություն» ակադեմիական նոր հրատարակությունում (չորս հատոր, յուրաքանչյուրը՝ երկու գրքով, նաև մեկական հատոր՝ ռուսերեն և անգլերեն): 2010 թ. հրատարակվել են այդ արժեքավոր աշխատության երրորդ հատորի առաջին (17-րդ դ. II կես-1900 թ.) և չորրորդ հատորի առաջին (1918-1945 թթ.) գրքերը:

***

Հնագիտության և ազգագրության *ինստիտուտում հնագիտության ոլորտում կարևոր արդյունքներ են գրանցվել մարդագոյացման, վաղ երկրագործական հասարակությունների ձևավորման գործընթացների, հին և միջնադարյան Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության ոլորտներում:*

Մասնավորապես, քարիդարյան տարաբնույթ հուշարձանների (Երևան 1, Լուսակերտ, Հատիս, Քասախի ու Դեբեդի կիրճի և այլ հնավայրեր) պեղումների, գտածոների, հումքի աղբյուրների, կենսապայմանների ուսումնասիրությունների շնորհիվ վերհանվել են լեռնաշխարհի բնակեցման վաղագույն փուլերի հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները, լեռնաշխարհում բանական մարդու տարածման աշխարհագրական, էկոլոգիական, տնտեսական ասպեկտները, վերին պալեոլիթյան հասարակությունների կենսապահովման համակարգի հիմնական բնութագրիչ հատկանիշները:

***

Հնագույն Հայաստանի բրոնզ-երկաթիդարյան հնագիտական մշակույթների բացահայտման, լեռնաշխարհին բնորոշ հասարակական զարգացումների առանձնահատկությունների լուսաբանման համար առանցքային նշանակություն ունեն ինստիտուտի արշավախմբերի ուժերով պեղված Կարմիր բլուրի նախաուրարտական շրջանի, Ջրահովիտի, Մեծամորի, Հառիճի, Այգևանի, Մոխրաբլուրի, Հոռոմի, Գեղարոտի, Ազարակի բնակատեղիների նյութերի ուսումնասիրությունները: Բրոնզ-երկաթիդարյան Հայաստանի մշակույթների ամբողջական նկարագրության, պարբերացման և ժամանակագրության համակարգի ձևավորման համար կարևոր տվյալներ են ձեռք բերվել ՀՀ տարբեր շրջաններում պեղված դամբարանադաշտերից (Լոռի բերդ, Լճաշեն, Օշական, Քարաշամբ, Թալին, Ծաղկալանջ, Հոռոմ, Սյունիք և այլն):

***

Հիմնարար հետազոտություններ են կատարվել միջնադարյան վանական համալիրների ուսումնասիրության ոլորտում (Վահանավանք, Խամշի վանք, Մարմաշեն, Ուշի, Հառիճ, Աքորի, Աղիտու, Հանդաբերդ, Ցախաց քար, Թեղենյաց և այլն): Հետազոտվել են անտիկ և քրիստոնեական Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի բազմաշերտ դրսևորումները:

***

ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի Դաշնության, Իտալիայի, Բելգիայի, Ավստրիայի տարբեր համալսարանների ու գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվել են հնագիտական ուսումնասիրություններ Հայաստանի տարբեր մարզերում, ինչի շնորհիվ հիմնովին թարմացվել է Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության ու մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը, օտար լեզուներով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ:

Հավաքվել, վերծանվել և մեկնաբանվել են Հայկական լեռնաշխարհի և գաղթօջախների հարյուրավոր վիմագիր արձանագրություններ:

***

2011 թ. սկսվել է Ազատան գյուղի մոտակա ամրոցից, բնակավայրից և մի քանի դամբարանադաշտերից բաղկացած հնագիտական հուշարձանի ծրագրային հետազոտությունը: Այն խիստ բացառիկ է իր բաղկացուցիչ բոլոր մասերի լավ պահպանվածությամբ, հնարավորություն է ընձեռում նույն տեղում դիտարկելու մ.թ.ա. XII դարից մինչև հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթն իր զարգացման մեջ: Ամրոցի և բնակավայրի տարբեր շերտերից հայտնաբերված նյութերի բաղդատումը տարբեր ժամանակաշրջանների 3 դամբարանադաշտերի տվյալների հետ (դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի ու ծեսերի արմատական փոփոխություններ) եզակի հնարավորություն է տալիս դիտարկելու ինչպես կրոնածիսական իրողությունների, այնպես և հասարակական ու

տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքը վերոհիշյալ ժամանակահատվածում:

***

Հայաստանի անկախության հռչակումից հետո էական փոփոխությունների է ենթարկվել նաև ազգագրական հետազոտությունների ուղղվածությունը, կիրառվել են հետազոտական նոր մոտեցումներ ու մեթոդներ: Բացի ավանդական մշակութային համալիրների ուսումնասիրությունից, հայ ազգագրության ուշադրության կենտրոնում են հայտնվել նոր թեմաներ՝ հասարակական-մշակութային փոխակերպումների և դրանց դրսևորումների (աղքատություն, ունեցվածքային բևեռացում, բնակչության արտագաղթ) մարդաբանություն, պատերազմի և էթնիկ հակամարտությունների մարդաբանություն, քաղաքական մարդաբանություն և այլն, ինչպես նաև գիտության պատմության, տեսության ու մեթոդաբանության հարցերը:

***

Վերջին տարիների ամենալուրջ հաջողությունը, որն ամբողջացրել է ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից հայ ազգագրության վերջին ձեռքբերումները, «Հայեր» հատորի հրատարակությունն է ռուսերենով (ՌԴ, Մոսկվա), որը գիտական բարձր մակարդակով ներկայացնում է հայոց մշակութային ժառանգության բոլոր հիմնական ոլորտներն ու կարևոր քայլ է հայոց մշակութային ժառանգության հանրայնացման ու միջազգայնացման ճանապարհին:

***

Նշանակալից ուսումնասիրություններ են կատարվել «Էթնոսոցիալական և մշակութային գործընթացները Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի իրականացման ընթացքում, մասնավորապես, միգրացիոն գործընթացներին, աշխատանքային զբաղվածությանը, պրոֆեսիոնալ մշակույթին, ընտանեկան հարաբերություններին, տոնածիսական համակարգին առնչվող հիմնահարցերի գիտական նկարագրության և վերլուծության ուղղությամբ:

***

1958 թ. ՀԽՍՀ ԳԱ կազմում ստեղծվել է **արևելագիտության սեկտորը,** որը 1971 թ. վերակազմավորվել է Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի:

Ինստիտուտի գիտական գործունեությանը նպաստել է արտասահմանյան արևելագիտական կենտրոնների հետ սերտ համագործակցությունը: Ինստիտուտի մասնագետներն իրենց գործունեությունն են ծավալել նաև համաշխարհային նշանակություն ունեցող այնպիսի կարևոր ծրագրերում, ինչպիսիք են՝ A. Humboldt Foundation, DAAD, KAAD, US Fulbright Program և այլն:

Ինստիտուտի թուրքագետներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական դրության, գաղափարական հոսանքների և այլ հանգուցային հարցերի լուսաբանման վրա:

***

Առանձնահատուկ տեղ է գրավել թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության ծրագրի ուսումնասիրությունը: Այս թեմային առնչվող աշխատություններից կարելի է առանձնացնել Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության և երիտթուրքերի դատավարության փաստաթղթերին վերաբերող ուսումնասիրությունները:

***

Արաբագիտության բնագավառում գերակայող է եղել արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների, սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացման ուղիների, միջարաբական, ինչպես նաև հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերությունների, իսլամի դերի և այդ երկրներում հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը:

***

Իրանագիտության բնագավառում ուսումնասիրություններն ընթացել են հիմնականում հետևյալ ուղղություններով՝ Իրանի պատմություն, ներքին և արտաքին քաղաքականություն, իրանական բանասիրություն և հայ-իրանական պատմամշակութային հարաբերություններ:

***

Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնի ստեղծմամբ ինստիտուտում հիմք է դրվել Քրիստոնյա Արևելքի հանգուցային հարցերի ուսումնասիրությանը: Ի թիվս այլոց լուսաբանվել են Աղվանքի, հայ-բյուզանդական քաղաքական-դավանական հարաբերությունների, հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության հարցերը:

***

Մեծ տեղ է հատկացվել արևելյան աղբյուրների, վավերագրերի հետազոտությանը և դրանց հայերեն թարգմանությանը: Մասնավորապես, հրատարակվել են թուրքական, արաբական և հույն-լատինական աղբյուրներին և սամարական ձեռագրերին նվիրված գործերը:

***

Ինստիտուտը հրատարակել է 450-ից ավել մենագրական աշխատություններ և ժողովածուներ, մի քանի հազարի հասնող գիտական հոդվածներ: Դրանց մի մասը հրատարակվել է արտերկրում, այդ թվում՝ Մերձավոր ու Միջին Արևելքի, Կովկասի, Արևելյան Ասիայի երկրներում, այսինքն՝ այն երկրներում, որոնց ժողովուրդներին են անմիջականորեն հասցեագրված ինստիտուտի գիտաշխատողների ուսումնասիրությունները: Աշխատությունները, բացի արևմտյան լեզուներից, հրատարակվում են նաև արևելյան լեզուներով, մասնավորապես՝ թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, ինչպես նաև ճապոներեն, կորեերեն, չինարեն:

***

Արևելագիտության ինստիտուտը պահպանել և խորացրել է ձեռք բերած միջազգային ճանաչումը և հեղինակությունը: Դրա վկայությունն է այն փաստը,

որ արտառանման շատ գիտնականներ իրենց ատենախոսությունները պաշտպանում են Արևելագիտության ինստիտուտում գործող, ՀՀ-ում միակ՝ «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում:

***

Արևելագետների համաշխարհային 36-րդ կոնգրեսում (Մոնրեալ, 2000 թ.) ինստիտուտը միաձայն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո գործող Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ:

***

Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը զբաղվել և շարունակում է զբաղվել առաջին հերթին հայերենագիտության հիմնարար հարցերով, հատկապես հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրու-թյամբ, վերջին տարիներին նաև գրական արևելահայերենի և արևմտահայերենի քննությամբ, ուշադրության կենտրոնում է պահում գրական լեզվի կանոնարկման, տերմինաբանության մշակման, ուսուցողական լեզվաբանության հարցերը, ստեղծում է ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային բառարաններ և տերմինարաններ:

***

Մեծ աշխատանք է կատարվել ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի և գործառության հետազոտության ուղղությամբ: Բազմաթիվ մենագրություններ և ժողովածուներ են նվիրվել լեզվական կառուցվածքի տարբեր հարցերի լուսաբանմանը, հընչութային, հոլովման և խոնարհման մասնահամակարգերի, քերականական առանձին կարգերի և առանձին խոսքի մասերի ուսումնասիրությանը: Սրանց արդյունքների յուրատեսակ ամփոփումն է «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր ակադեմիական քերականությունը: Կարևորագույն արդյունքներ են հայոց լեզվի զարգացմանը և կառուցվածքին, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներին, իմաստաբանությանը և բառակազմությանը, ժամանակակից գրական հայերենին, արդի հայերենի դերանուններին, քերականությանը, չթեքվող խոսքի մասերին, դրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությանը, ժամանակակից հայերենի շարահյուսությանը նվիրված հիմնարար աշխատությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվել ոճագիտությանը, մասնավորապես, գործառական ոճերի և քերականական ու բառային ոճաբանության հարցերի ուսումնասիրությանը: Ստեղծվել են գեղարվեստական գրականության լեզվին վերաբերող աշխատություններ:

***

Հայագիտության ավանդական ուղղությունների ընդլայնմանն ու զարգացմանը զուգընթաց՝ հիմք է դրվել այնպիսի նոր ուղղությունների, ինչպիսիք են հանրալեզվաբանությունը, հոգելեզվաբանությունը, տեքստի լեզվաբա-

նությունը, մաթեմատիկական լեզվաբանությունը, զարգացման նոր մակարդակի է բարձրացել փորձառական հնչյունաբանությունը:

***

Զգալի աշխատանքներ են կատարվել ընդհանուր և համեմատական լեզվաբանության բնագավառում: Ստեղծվել են ընդհանուր և համեմատական լեզվաբանության հարցերին և պատմությանը նվիրված հիմնարար աշխատություններ:

***

Նշանակալից են ձեռքբերումները հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում: Հավաքվել է փաստական հարուստ նյութ, ստեղծվել են ոչ միայն հայոց լեզվի ամբողջական պատմությանը, այլև նրա զարգացման առանձին շրջաններին ու բնագավառներին վերաբերող աշխատություններ: Ուշադրության կենտրոնում են եղել այնպիսի հիմնարար հարցեր, ինչպիսիք են հայերենի զարգացման փուլերի ժամանակագրական սահմանների և առանձնահատկությունների որոշումը, գրական լեզուների ձևավորման և գործառության, նրանց բարբառային հիմքերի զարգացման ու մշակման հիմնական միտումների բացահայտումը:

***

Բարբառագիտական ուսումնասիրությունների բնագավառում ամենանշանակալից ձեռնարկումը հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման աշխատանքն է: Սրա հետ կապված նպատակ է դրվում վերականգնել բարբառների աշխարհագրական տեղաբաշխման պատմական պատկերը և, մասնավորապես, ցույց տալ հայ բարբառների մինչև 1915 թ. եղած վիճակը: Ատլասի վերաբերյալ նյութեր են հավաքվել թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս գտնվող հարյուրավոր վայրերից, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր աղբյուրների հիման վրա:

***

Հարուստ ավանդույթներ ունեցող հայ բառարանագրական ժառանգությունը Լեզվի ինստիտուտը համալրել է բացատրական, երկլեզվյան-թարգմանական բառարաններով, ստեղծել հոմանիշների, հականիշների, լեզվաբանական, շրջուն (հանգաբառարան), հաճախականության, տարբեր հեղինակների լեզվի, բարբառային, տերմինաբանական, հայոց լեզվի նորաբանությունների, ուղղագրական բառարաններ:

***

Հրատարակված է գրաբար ինքնուրույն գրականության հեղինակային համաբարբառների ավելի քան 40 հատոր (2007 թ.՝ Թ. Մեծոփեցու (երկհատոր), 2011-2013 թթ.՝ Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցի» (հհ. I-IV) համաբարբառները): Պատրաստ են Մ. Կաղանկատուացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց», Ուխտանէս Եպիսկոպոսի «Պատմութիւն հայոց» էլեկտրոնային համաբարբառները:

***

2006 թ. ինստիտուտը կազմակերպում է Ջահուկյանին նվիրված «Ջահուկյանական ընթերցումներ», երիտասարդ լեզվաբանների հանրապետական ամենամյա գիտական նստաշրջաններ՝ հանրապետության բուհերի, Արցախի ներկայացուցիչների, այլև արտերկրի հայագետների մասնակցությամբ:

***

Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում *ստեղծվել է «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը (1962-1979 թթ.): Այս հիմնարար հրատարակությունում ներկայացվել է շրջանի հայ նոր գրականության ամբողջական պատմությունը՝ զարգացման ներքին շրջափուլերով, հեղինակներին նվիրված դիմանկարներով և գրական ուղղություններով: Առանձին բաժիններ են հատկացվել նաև արձակին, պոեզիային, աշուղական բանաստեղծությանը, դրամատուրգիային, մեմուարային գրականությանը, գյուղագրությանը, հրապարակախոսությանը և քննադատությանը: Այս աշխատության կարևոր արժանիքներից է և այն, որ նրանում հայ գրականության պատմության ընթացքը դիտարկվում է համաշխարհային գրականության զարգացման ընդհանուր համատեքստում: Հինգհատորյակը ստեղծող կոլեկտիվը արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի (1980 թ.):*

***

Հայ նոր գրականության պատմության ուսումնասիրման բնագավառում հաջորդ կարևոր ձեռքբերումը «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակն է: Այն հայ քննադատական մտքի պատմության վերլուծության առաջին փորձն է: Երկհատորյակը հնարավորություն է տալիս վեր հանելու տեսության և գրական ընթացքի միջև եղած ուղղակի կապը, և թե քննադատական միտքը գաղափարական, թեմատիկ և գեղագիտական ինչ խնդիրներ է առաջադրել գրականությանը, ինչպես են դրանք լուծվել ժամանակի ստեղծագործողների կողմից: Հայ նոր գրականության բաժնի մնայուն գիտական արդյունքներից պետք է համարել «Հայ վեպի պատմության» հիմնարար՝ կոլեկտիվ ժողովածուի ստեղծումը:

***

Տարբեր երկերի ստեղծագործական պատմության և գրողների կենսագրության ամբողջացման համար մեծ կարևորություն ունեն նրանց մասին ժամանակակիցների գրած հուշերը: Անցնող տասնամյակների ընթացքում լույս են տեսել ժամանակակիցների հուշերը Միսաք Մեծարենցի, Ռաֆֆու, Ղևոնդ Ալիշանի, Հովհաննես Թումանյանի, Եղիշե Չարենցի և այլ դասական գրողների մասին:

***

Սփյուռքահայ գրականության պատմության ուսումնասիրությունն ունեցել է նաև գիտագործնական նշանակություն՝ հայաստանյան ընթերցողներին ծանոթացնել Սփյուռքի գրականությանը: Առանձին մենագրություններ են նվիրվել սփյուռքահայ նշանավոր գրողներ Հակոբ Մնձուրուն, Շահան Շահնուրին, Համաստեղին,

Հակոբ Օշականին, Զարեհ Որբունուն և մի շարք այլ հեղինակների: Ուսումնասիրվում են նաև Սփյուռքի օտարալեզու հայ գրողների ստեղծագործությունները:

***

Ինստիտուտը ներկայումս ձեռնամուխ է եղել երկհատոր «Սփյուռքահայ գրականության հանրագիտարան»-ի ստեղծմանը, որտեղ առանձին բառահոդվածներով ներկայացվելու են սփյուռքահայ հեղինակները, Սփյուռքի գրական կենտրոնները, միություն- ները և գրական մամուլը: Նման աշխատանքը փաստական առու-մով էականորեն կընդլայնի սփյուռքահայ գրականության մասին ըմբռնումները, կդառնա Սփյուռքահայ գրականության պատմության գրության աղբյուրագիտական հիմքը:

***

Ներկայումս համաշխարհային և համեմատական գրականության բաժինը ձեռնամուխ է եղել հանրագիտարանային բնույթի գիտական նոր՝ «Հայ գրականության կապերը համաշխարհային գրականության հետ» (երկու հատորով) ծրագրի իրականացմանը:

***

Գրականության ինստիտուտը սկզբնավորման տարիներից ձեռնամուխ է եղել հայ դասականների երկերի ակադեմիական բազմահատորյակների հրատարակությանը: Անցնող տասնամյակների ընթացքում լույս են տեսել Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռաֆֆու, Հովհ. Թումանյանի (երկու անգամ), Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Պ. Պռոշյանի, Մուրացանի, Ե. Չարենցի [այնուհետև գումարվել է նրա «Անտիպ և չհավաքված երկեր» հատորը (կազմող՝ Ա. Չարենց)], Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի երկերի ակադեմիական հրատարակությունները:

***

Այժմ տպագրության ընթացքի մեջ է Ավ. Իսահակյանի երկերի լիակատար գիտական հրատարակությունը (14 հատորով, լույս են տեսել I, II և IV հատորները), Լ. Շանթի երկերի ժողովածուն (9 հատորով, տպագրվել են I-VII հատորները), նախապատրաստական փուլում է Ն. Աղբալյանի (7 հատորով) երկերի հրատարակությունը:

***

Տնտեսագիտության ինստիտուտում հետազոտական աշխատանքները սկզբնական փուլում հիմնականում վերաբերել են ճյուղային տնտեսագիտության հարցերին, Հայաստանի տնտեսական պատմությանը և հայ տնտեսագիտական մտքի պատմության խնդիրներին: Հրատարակվել են հայ տնտեսագիտական մտքի պատմության առանձին շրջաններն ընդգրկող աշխատություններ, ուրվագծվել են տնտեսագիտական մտքի հիմնական ուղղությունները:

***

1960-ական թվականներից ինստիտուտի գործունեությունը ստացել է ծրագրային ուղղվածություն՝ երկարատև ժամանակի կտրվածքով: Տնտեսագիտական հետազոտությունների որոնումների առանցքը դարձել են հասարակական

արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրները, լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված հիմնական ֆոնդերի վերարտադրությանն ու արդյունավետությանը, գիտատեխնիկական առաջընթացին՝ կառավարմանը և խթանմանը, տնտեսական հաշվարկին:

***

Ինստիտուտի հետազոտական կարևոր ոլորտներից են ժողովրդագրության և զբաղվածության քաղաքականության մշակման, բնակչության և աշխատանքային ռեսուրսների կառավարման և կանխատեսման հարցերը: 1968 թ. Մոսկվայում հրատարակվել է «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966-1985 թթ. Հայկական ՍՍՀ-ում» կոլեկտիվ եռահատոր աշխատությունը (ղեկ.՝ Վ. Խոջաբեկյան): Տվյալ հիմնահարցի վերաբերյալ Հայաստանի և ԳԴՀ գիտությունների ակադեմիաների միջև կնքված երկկողմ համաձայնագրով 1976-1980 թթ. ծավալվել է գիտահետազոտական բեղմնավոր աշխատանք, որի արդյունքներն արժանացել են երկու ակադեմիաների բարձր գնահատականին և հրատարակվել գերմաներեն ու ռուսերեն:

***

1980-ական թվականներին մի շարք ելակետային դրույթների հիման վրա գիտականորեն լուսաբանվել են այնպիսի հասարակական, տնտեսագիտական կատեգորիաներ, ինչպիսիք են արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները, նյութական շահերը և նյութական շահագրգռվածությունը, ապրանքադրամային հարաբերությունները և այլն: Հիմնավորվել են բնակչության բարեկեցությունը բնութագրող տնտեսական ցուցանիշները, առաջարկվել են դրանց հաշվարկման մեթոդաբանական սկզբունքներ, բնութագրվել են բնակչության եկամուտների աճի, կառուցվածքի, սպառման և խնայողությունների փոփոխության միտումները:

***

1990-ական թվականներին Հայաստանը դիմորոշվել է դեպի շուկայական տնտեսաձևը: Այդ առումով հիմնավորվել են հանրապետության ազգային էկոնոմիկայի ստեղծման, վարչահրամայական տնտեսական համակարգից սեփականության բազմաձևության և շուկայական ենթակառուցվածքների կազմավորման տրամաբանությունը և փուլերը, անկախության և ազգապահպանության ռազմավարական ուղղությունները, շուկայական էկոնոմիկայի պետական վերահսկման և կարգավորիչ դերի, քաղաքակիրթ շուկա ձևավորելու անհրաժեշտությունը:

***

Հետազոտվել են Հայաստանի հանքային հումքի և հանքարդյունաբերության էկոնոմիկայի առանձին ոլորտներ, մշակվել են առավելապես դեպի տեղական հանքահումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը վերակողմնորոշելու հնարավոր ուղղությունները, հիմնախնդիրների հետազոտության շրջանակներում տրվել են ՀՀ ոչ մետաղական օգտակար հանածոներից մի քանիսի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությունները:

***

2007 թվականից ինստիտուտի տարեգրության մեջ սկսվել է մի նոր շրջափուլ, երբ ՀՀ կառավարության որոշմամբ տնտեսագիտական ուղղվածություն ունեցող՝ հանրապետության երեք գիտահետազոտական ինստիտուտները վերակազմակերպվել և միացվել են ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

***

Ինստիտուտի վերջին տարիների ձեռնարկումներից է «Նշանավոր տնտեսագետների տողանը. գիտակենսագրական ուրվագծեր» երկհատորյակը (2009 թ.), որն արտահայտում է համաշխարհային տընտեսագիտական մտքի հետագիծը նշաձողերի և դպրոցների հաջորդափոխության մեջ: Նմանատիպ փորձ է նաև «Հայ տնտեսագետներ» (2010 թ.) աշխատությունը, որն, ըստ էության, հայ տնտեսագիտական մտքի պատմության (XIX դ. կեսերից մինչև այժմ) ուղեցույց է՝ դրանում ընդգրկված անունների գիտակենսագրական ուրվագծի ձևով:

***

Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում. հայ փիլիսոփայության պատմության ոլորտում հետազոտությունները թույլ են տվել բացահայտել ականավոր հայ մտածողների (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սարկավագ, Վահրամ Ռաբունի, Գրիգոր Տաթևացի, Հովնան Որոտնեցի, Սիմեոն Ջուղայեցի, Ստեփանոս Լեհացի և այլք) գաղափարական ժառանգության տեղն ու նշանակությունը հայ փիլիսոփայության և մշակույթի պատմության համատեքստում: Ներկայացվել է հայ փիլիսոփայության պատմության ամբողջական նոր շարադրանք՝ անտիկ շրջանից մինչև XVIII դարը:

***

Հետազոտություններ են կատարվել նաև փիլիսոփայության ընդհանուր հիմնահարցերի, մասնավորապես, տրամաբանության բնագավառում: Առաջադրվել է բազմատրամաբանության գաղափարը, հատուկ ուշադրություն է նվիրվել ավանդական ձևական տրա- մաբանության և մաթեմատիկական տրամաբանության հարցերին, ձևակերպվել է լեզվաբանական լրացուցչության սկզբունքը Հայաստանում, հիմնվել է փիլիսոփայական փաստարկման դպրոց՝ գիտության նոր ուղղություն, որը միջազգային լայն ճանաչում է գտել:

***

Ինստիտուտի հիմնական հետազոտական ուղղություններից է գիտության փիլիսոփայությունը և մեթոդաբանությունը: 1960-1970-ական թվականներին անցում է կատարվել իմացաբանության ավանդական ընդհանուր խնդրակարգից դեպի գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության և տրամաբանության բնագավառ. դա համամիութենական ճանաչում է բերել գիտության փիլի- սոփայության, մեթոդաբանության և տրամաբանության «Գիտական գիտելիքի

տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» անունով հայկական դպրոցին:

***

Գեղագիտության բնագավառում ուսումնասիրվել են գեղեցիկի էությանը, արվեստի առարկային, արվեստի առաջացմանը վերաբերող հիմնահարցերը, հատկապես՝ գեղեցիկի օբյեկտիվության չափանիշների և ճշմարտության հետ նրա հարաբերության հարցը: Հետազոտվել են ազգային գիտակցության գեղագիտական դրսևորումները, որի նպատակն էր վերհանել հայ ազգային գեղարվեստական-գեղագիտական մտածողության առանձնահատկությունները:

***

Սոցիալական փիլիսոփայության ոլորտում հետազոտվել են աշխատանքի, տեխնիկայի, գիտության և գիտատեխնիկական առաջընթացի վերաբերյալ հարցերը, բացահայտվել են «պրակտիկա-տեխնիկա-գիտություն» համակարգի ձևավորման ու զարգացման կառուցվածքը, գիտության, տեխնիկայի, արտադրության և հասարակական պրակտիկայի հարաբերակցության առանձնահատկությունները տարբեր պատմական ժամանակաշրջաններում:

***

Վերջին տարիների գիտական մշակումներում գերիշխում է հետազոտությունների այն ուղղությունը, որի շրջանակում փորձեր են ձեռնարկվում կիրառելու մշակույթի և ավանդույթների տեսությունների ընդհանուր սկզբունքներն ազգային և գլոբալ մակարդակներում մարդկային գոյության և զարգացման ռազմավարական խնդիրների լուծման համար:

***

1976 թ. Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում հիմնադրվել է կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների բաժինը: Այդ ժամանակաշրջանում զարգացել էր հատկապես արդյունաբերական սոցիոլոգիան, բազմաթիվ կիրառական հետազոտություններ էին կատարվել Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում: Ակադեմիական սոցիոլոգները ուսումնասիրել էին հանրապետության շրջաններում և գյուղերում բնակվող մարդկանց կենսապայմանները և կենսամակարդակը, աշխատանքի նկատմամբ աշխատողների վերաբերմունքը և նրանց արժեքային կողմնորոշումները:

***

1988 թ.՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո սոցիոլոգիական հետազոտությունների բաժինն սկսել է մշակել աղետների սոցիոլոգիան՝ որպես սոցիոլոգիայի բնագավառում հետազոտությունների նոր ուղղություն, որն առաջինն էր և միակը Խորհրդային Միությունում: Այդ ժամանակ ակադեմիական հետազոտություններում սկսել են ձևավորվել գիտական նոր ուղղություններ, ինչպիսիք են՝ արտագաղթի և փախստականների սոցիոլոգիան, աղքատության սոցիոլոգիան, ընտանիքի սոցիոլոգիան, երիտասարդության և մանկության սոցիոլոգիան, էթնոսոցիոլոգիան և այլն:

***

Քաղաքական սոցիոլոգիայի և քաղաքականության փիլիսոփայության խնդիրների վերաբերյալ գիտական հետազոտություններն ինստիտուտում կատարվել են դեռևս XX դ. 90-ական թվականների կեսերից: Այդ աշխատանքների շնորհիվ 2000 թ. սկզբին կազմավորվել է թեմատիկ խումբ, իսկ հետո՝ նաև քաղաքական հետազոտությունների բաժին:

***

Ինստիտուտում քաղաքագիտության թեմատիկան երիտասարդ հայկական պետության առջև կանգնած երկրառազմավարական և երկրաքաղաքական մարտահրավերներն են՝ հաշվի առնելով ղարաբաղյան հիմնահարցը, ինչպես նաև հանրապետության ներսում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացների զարգացման խնդիրները, հեռանկարները և բնույթը: Քաղաքագիտական հետազոտու-թյունների առաջին արդյունքները տպագրվել են աշխատակիցնե- րի բազմաթիվ հոդվածներում և մի քանի մենագրություններում, որոնք նորովի են վերլուծում և լուսաբանում ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային և տեղական բնույթի քաղաքական գործընթացները:

***

Պետության և իրավունքի հետազոտական ծրագիրը ներառել է իրավունքի պատմության և իրավունքի հուշարձանների, Հայաստանի պետականության, ինչպես նաև իրավունքի ձևավորման տեսական հարցերի, շրջակա միջավայրի իրավական ապահովման և պաշտպանության վերաբերյալ ուսումնասիրությունները:

***

1990-ական թվականներից փորձ է արվել նորովի հետազոտել, հիմնավորել և գիտական շրջանառության մեջ դնել պառլամենտարիզմի հիմնարար հարցերը, հայ իրավաքաղաքական մտքի պատմությունը, միջնադարյան Հայաստանի իրավունքի պատմությունը:

***

Մեծ ուշադրություն է դարձվել իրավական գործունեության տեսական ու գործնական հարցերին, ինչպես նաև ՀՀ խորհրդարանի օրենսդրական գործունեության առանձնահատկությունների վերլուծությանը, ՀՀ օրենսդրության համակարգում հակասությունների և բացթողումների հիմնավորմանը և դրանց հաղթահարման հիմնական ուղիների քննությանը: Այդ հարցերի համալիր հետազոտությունը հնարավոր է դարձրել կանխատեսել ազգային օրենսդրության համակարգի կատարելագործման ու զարգացման հիմնական ուղղությունները և միտումները:

***

Վերջին տարիներին սկսվել է գիտական նոր ուղղության՝ իրավունքի ֆենոմենոլոգիայի տեսական-մեթոդաբանական խնդիրների ակտիվ մշակումը:

***

***ԳԱԱ արվեստի ինստիտուտը** գիտական միակ հաստատությունն է, որտեղ կատարվող ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները հայ արվեստի*

պատմությունն ու տեսական խնդիրներն են: Ինստիտուտում աշխատանքներ են տարվում նաև ազգային երաժշտության ու թատրոնի, ճարտարապետության և կերպարվեստի դասականների ստեղծագործական ժառանգության ակադեմիական հրատարակության, բանահյուսական նմուշների հավաքման, դասակարգման, վերծանման ու համակարգչային մշակման ուղղությամբ:

***

Ճարտարապետության պատմության և տեսության բնագավառում կարևորագույն նվաճումներից է Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման գիտական հիմնավորումը: Նախագծի հեղինակ Ա. Սահինյանի ղեկավարությամբ 1968-1975 թթ. իրականացվել է տաճարի վերակառուցումը (արժանացել է Հայաստանի պետական մրցանակի): Արվեստի ինստիտուտի, Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական խմբի և Վենետիկի «Հայ մշակույթի ուսումնասիրման կենտրոնի» համագործակցության շնորհիվ 1968-1998 թթ. Միլանում իտալերենով, հայերենով և անգլերենով հրատարակվել է «Հայ ճարտարապետության վավերագրերը» մատենաշարի 23 պրակ, որոնք միջազգային գիտական հանրությանը ներկայացրել են ազգային շինարարական արվեստի գոհարները: Բազմակողմանիորեն ուսումնասիրվել է միջնադարյան հայ ճարտարապետությունը:

***

Ինստիտուտի ճարտարապետության պատմաբանները հայ ճարտարապետության ականավոր ներկայացուցիչներին՝ Թորոս Թորամանյանին, Ալեքսանդր Թամանյանին, Ռաֆայել Իսրայելյանին և այլոց, ոճական տարբեր ուղղություններին, քաղաքաշինությանը, նոր շինանյութերի և շինարարական առաջավոր մեթոդների որոնմանը նվիրված ուսումնասիրություններում մեկնել են խորհրդահայ ճարտարապետության հարուստ փորձը, ստեղծել ճարտարապետության պատմությունն ընդհանրացնող աշխատություններ:

***

Ստեղծվել են Կիլիկիայի, Գլաձորի, Վասպուրականի, Ղրիմի, Արցախի մանրանկարչական դպրոցներին նվիրված մենագրություններ, ընդլայնվել միջնադարյան հայ կերպարվեստի ուսումնասիրության շրջանակները, լուսաբանվել նշանավոր մանրանկարիչ-ծաղկողների՝ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Հակոբ Ջուղայեցու և այլոց ստեղծագործական ժառանգության յուրահատկությունները: Գիտական ուսումնասիրության նյութ են դարձել հայկական զարդանկարչությունը, որմնանկարչությունը, քանդակագործությունը, խաչքարերը, միջնադարյան հայ ճարտարապետության և կերպարվեստի մի շարք ճյուղերի համադրման հարցերը:

***

Արգասավոր ճանապարհ է անցել հայ թատերագիտությունը՝ փաստական նյութի կուտակումից մինչև արվեստագիտական ընդհանրացումներ, մենագրական աշխատություններից մինչև թատրոնի պատմություն ու տեսություն: Լինելով նախորդ դարասկզբին ձևավորված գիտություն՝ Արվեստի ինստիտուտի

հիմնադրման օրից այն դարձել է նրա առաջատար ճյուղերից մեկը: Հայ դերասաններ ու բեմադրիչներ Պետրոս Ադամյանին, Սիրանույշին, Հովհաննես Աբելյանին, Մարտիրոս Մնակյանին, Արմեն Արմենյանին, Վավիկ Վարդանյանին, Մկրտիչ Ջանանին, Հրաչյա Ներսիսյանին, Սուրեն Քոչարյանին, Արմեն Գուլակյանին, Վարդան Ամեմյանին, Հրաչյա Ղափլանյանին և այլոց նվիրված են մի շարք մենագրություններ:

***

1966 թ. ինստիտուտին առընթեր շեքսպիրագիտության հայկական կենտրոնի և վերջինիս կից շեքսպիրյան եզակի գրադարանի ստեղծումից հետո գիտական ամուր հիմքերի վրա է դրվել Շեքսպիրի և հայ գրականության ու արվեստի, մասնավորապես, թատրոնի հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը, որի արդյունքներն արտացոլվել են պարբերաբար հրատարակվող «Շեքսպիրական» ժողովածուի յոթ պրակներում:

***

Որոշակի առաջընթաց է ապրել նաև կինոգիտությունը՝ հայ արվեստագիտության ամենաերիտասարդ բնագավառը: Հրատարակված աշխատություններում առանձին ուշադրություն է հատկացվել ինչպես հայ կինոյի ականավոր դեմքերի ստեղծագործության, այնպես էլ ազգային կինոարվեստի պատմական զարգացման ուսումնասիրությանը:

***

Արվեստի ինստիտուտի երաժշտագետները զբաղվել են, մի կողմից, հայ դասական և հոգևոր երաժշտության հարուստ ժառանգության, մյուս կողմից, ժամանակակից երաժշտական իրականության կանոնավոր ուսումնասիրությամբ:

***

Ինստիտուտում մեծ ուշադրություն է դարձվել երաժշտական ֆոլկլորագիտության զարգացմանը, որն ընթացել է հետևյալ հիմնական ուղղություններով՝ գիտարշավների միջոցով հայ ժողովրդական՝ գեղջկական, աշուղական, քաղաքային երգերի և ավանդական նվագարանային երաժշտության նմուշների հավաքում, հավաքված նյութի ուսումնասիրություն, դասակարգում և անձնագրավորում, նմուշների վերծանում և նոտագրում, ժողովրդական երգերի ժողովածուների նախապատրաստում և հրատարակում: Արվեստի ինստիտուտի ձայնադարանային հարուստ ֆոնդը երաժշտական-բանահյուսական եզակի սկզբնաղբյուրի բացառիկ արժեք ունի: Նրա հիման վրա են հրատարակվել Կոմիտասի սան Մ. Թումաճանի «Հայրենի երգ ու բան» քառահատոր ժողովածուն (խմբագիրներ՝ Ռ. Աթայան, Զ. Թագակչյան, 1972-2005 թթ.) և «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի ութ հատորները (խմբագիր՝ Կ. Խուդաբաշյան, 2008-2012 թթ.):